

ԽՈՍՔԻՄԱՍԱՅԻՆ ԵՐԿԱՐԺԵՔ > ՄԻԱՐԺԵՔ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ  
ՀԻՆ ՀԱՅՅԵՐԵՆՈՒՄ  
(ըստ գոյականի և ածականի)

Լ. Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Լեզվի տարժամանակյա կտրվածքում բառերի բովանդակային դիտվածքում տեղի են ունենում փոփոխություններ, որոնք կարող են ազդել բառիմաստի և նրա խոսքիմասային արժեքի հարաբերակցության վրա: Բառույթի իմաստաարժեքային այդ փոփոխությունների հիմքում առկա է պատճառահետևանքային կապ: Բովանդակային պլանի փոփոխությունը, որ հետևանք է մի շարք գործոնների, իր հերթին դառնում է պատճառ մեկ ուրիշ հետևանքի՝ խոսքիմասային արժեքի (մասնակի կամ լիակատար) տեղաշարժերի համար: ... Իմաստափոխության ու խոսքիմասային արժեքի տեղաշարժերի երևույթը, լեզվի զարգացման միևնույն փուլի շրջանակներում, թե դրանից դուրս, մեջև կրում է հարժամանակյա բնույթ: Բառերը միանգամից չեն երկփեղկվում և իմաստափոխվում ու՝ խոսքիմասային արժեքով կամ էլ չեն ձեռքազատվում տրոհված իմաստից ու արժեքից:

Պատճառահետևանքային փոխանցումների այս գործընթացը ընդգրկում է լեզվական հիմնարկի տարբեր մակարդակներ. բառաիմաստային մակարդակում, կատարված փոփոխությունները պայմանավորում են բառույթի խոսքիմասային արժեքի տեղաշարժերը ձևով ձևաբանականում և դրա իրացումը շարահյուսության մակարդակում:

Բառիմաստի և խոսքիմասային արժեքի հարաբերակցված փոփոխությունները տեսականորեն կարելի է խմբավորել տարբերակելով բառիմաստի հատկումն ու արժեքի երկփեղկումը, բառիմաստի նեղացումն ու արժեք(ներ)ի կորուստը, բառիմաստի անցումն ու արժեք(ներ)ի փոխանցումը:

Բառիմաստի ընդլայնման անմիջական հետևանքը բառույթի բազմիմաստությունն է, որը ներկայանում է ձևով արտահայտվում է մեկ բառաձևով: Լեզվի տարժամանակյա կտրվածքում, սակայն, բառույթի տրոհված իմաստները տարբերակվող բառաբանական հատկանիշներով կարող են հանգել խոսքիմասային տարարժեքության:

Հին հայերենի բառային կազմի իմաստաարժեքային տարժամանակյա հիմնամատությունը ցույց է տալիս. որոշակի բառիմաստ և անխառն խոսքիմասային արժեք ունեցող բառույթը լեզվի միևնույն գոյավիճակի ենթափուլերում, պահպանելով մայր իմաստն ու արժեքը, երկփեղկվում է իմաստային դաշտով ու խոսքիմասային արժեքով:

Այսպես, աղօթական բառի նախնական նշանակությունն է «աղոթքին հատուկ, մաղթողական», խոսքիմասային արժեքով ածական է: Հմմտ. Պարզեղ աղօթական բանիցն զվճիռ մահուն (Փիլ. Երր): Աղօթական է բանս և յուսոյ (ՆՁԲ): Այնուհետև բառիմաստի ընդլայնման իրողությամբ պայմանավորված՝

1 Տե՛ս Լ. Մ. Խաչատրյան, Գոյականի և ածականի իմաստափոխությամբ պայմանավորված խոսքիմասային տարարժեքությունը հին հայերենում (ՀՀ ԳԱ Լրագրեր հասարակական գիտությունների, 1990, № 8, էջ 25—32):

2 Այս կարգի բառերի մասին տե՛ս Գ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 526—527, Ն. Պատկանյան, Քերականական համալիրները ժամանակակից հայերենում, Երևան, 1979, էջ 87—102, Լ. Խաչատրյան, Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ, Երևան, 1985, էջ 32—49:



տները լեզվի միևնույն գոյավիճակի ենթափուլերում չեն պահպանում երկփեղկված բառի մաստերն ու խոսքի մասային արժեքները և հանդես են գալիս բառական մեկ իմաստով ու մեկ խոսքի մասային արժեքով: Մի բնագրում տվյալ բառույթը համապատասխան իմաստներով ունի ածականի և գոյականի արժեքներ, իսկ ժամանակային առումով հաջորդող բնագրերում արդեն ցուցաբերում է կամ գոյականի, կամ էլ ածականի անխառն իմաստ ու արժեք:

Ըստ այդմ էլ, հին հայերենում բառույթի գոյական||ածական երկարժեքություն փոփոխությունը ունի երկու կարգի դրսևորում.

ա) երկարժեքությունից անցում գոյականի,

բ) երկարժեքությունից անցում ածականի:

Տարժամանակյա հայեցակետով այդ կարգի բառերը հին հայերենի շրջանակներում բնութագրվում են երկարժեք-միարժեք հարաբերությամբ:

Ա. Երկարժեքությունից անցում գոյականի: Հին հայերենի գոյավիճակում գոյական||ածական արժեքներ համատեղող որոշ բառեր, պայմանավորված բառի մաստի նեղացման գործընթացով, երկարժեքությունից անցել են գոյականի, ինչպես ցույց է տալիս բառի մաստի պատմական քննությունը, իմաստաարժեքային փոփոխությունների այդպիսի ուղի անցել են այն երկարժեք բառերը, որոնք նախնական խոսքի մասային արժեքով եղել են ածական: Բառույթը, բովանդակային պլանի հավելման հետևանքով, ածականական իմաստի կողքին համատեղել է գոյականի իմաստ ու արժեք: Լեզվի զարգացման ընթացքում, սակայն, նորամուտ արժեքը կայունացել է, իսկ նախնական պարզացող իմաստն ու արժեքը, բառի մաստի նեղացման հետևանքով, դուրս են մղվել բացի իմաստային դաշտից:

Այդ բառերից են.

|                     |         |          |          |         |
|---------------------|---------|----------|----------|---------|
| երէց <sup>4</sup>   | ենթակայ | կաւագործ | շարագիր  | ցուցակ  |
| ժառանգ <sup>5</sup> | լալական | մրցական  | պարունակ | և այլն: |

Երէց «առաջնեկ, ավագ, գլխավոր, մեծ, հնագույն» իմաստներով համատեղում է ածականի և գոյականի խոսքի մասային արժեքներ: Հմմտ. Եւ ասէ Աբրամ ցծառայն իւր ցեղէց տան իւրոյ (ՀՔԿ)—ած.: Երէցն կրտսերոյն ծառայեսցէ (ն. տ.)—գոյ.:

Իսկ «բահանա» իմաստով բառույթն անկախացել է գոյականի անխառն իմաստով ու արժեքով: Հմմտ. Որք յաւուրս սրբոյն Գրիգորի և Տրդատայ հաւատացեալ էին ի Քրիստոս. ընդ որս և զԶուրթայ երէց Արտաշատու (Խոր.): Յորում շարչարեալ մեռանէր Գաբրիէլ՝ երէց Սեբաստիոյ (Աս.):

Շարագիր—շարագրող. մատենագիր, վիպագիր, հեղինակ» իմաստներով խոսքի մասային երկարժեք բառ է: Հմմտ. Համառօտէ շարագիրն, և ոչ մի ըստ միոյն է պատմէ (ՆՀԲ)—ած.: Քերականութիւն է հմտութիւն բանից, որք ի բերթողացն և ի շարագրաց իբրու բազում անգամ ասացելոց (ՆՀԲ)—գոյ.:

Այնուհետև բառի մաստը մասնավորվել է շարագրություն, մատենագրություն, շարագրված բան. տառեր» առարկայական նշանակության վրա, և բառույթն անկախացել է գոյականի արժեքով: Հմմտ. Նկարագիրդ առականկան է, որպէս ամենայն շարագիրք Սողոմոնի. զի զՄովսէս և զԵզրաս ոչ գտանեմք այսու շարագրաւ շարագրեալ (ՆՀԲ):

4 Գ. Զահուկյանը, դասդասելով նախագրային հայերենի բառային կազմն ըստ թեմատիկ խմբերի, երէց բառը դրել է ժամանակ ցույց տվող բառի մաստային խմբի մեջ՝ «ավագ» ժամանակային իմաստով. մի հանգամանք, որ վկայում է բառի նախնական ածականական արժեքի մասին (տե՛ս Գ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 217):

5 Մ. Զամյանը ծառանգ բառի երկարժեքության վերաբերյալ ունի հետևյալ նկատառումը, որ այն «թեպէտ հասարակօրէն գոյականապէս վարի(ն), բայց երբեմն ի գործ ածի(ն) նաև իբր բառական», և այդ կարգի բառերը կոչում է «միջակ» (տե՛ս նրա Քերականութիւն հայկազեան լեզուի, Եուլի, 1859, էջ 166):

Ժառանգ—«Օրինավոր որդի. որդեգիր» իմաստներով երկարժեք բառ է։ Հմմտ. Սա է ժառանգն, եկայք սպանցուք զսա, և կալցուք զժառանգութիւն սորա (ՀՔԿ)–ած.։ Մեծարեաց զնա Գիր՝ իբրև զարժանաւոր ժառանգ (Խոր)–գոյ.։

Այնուհետև բառիմաստի նեղացմամբ ձեռք է բերել «ժառանգութիւն» նշանակութիւն և անկախացել է գոյականի անխառն արժեքով։ Հմմտ. Միայն կրսերն զհրամանն արար և զտէրութեան ժառանգն էառ (Կրպ. ոտ.)։

Ինչպես տեսնում ենք, լեզվի տարժամանակյա կտրվածքում գոյականի ածական երկարժեք բառերը, ենթարկվելով իմաստարժեքային մասնակի տեղաշարժերի, երկարժեքութիւնից անցել են գոյականի՝ կորցնելով տարարժեքութիւն քերականական կարգը։

Բ. Երկարժեքութիւնից անցում ածականի։ Խոսքիմասային տարարժեք բառերը կամ հավասարապես համատեղում են երկու և ավելի խոսքիմասային իմաստներ ու արժեքներ, կամ էլ երկփեղկված արժեքներից մեկը ծավալի առումով գերիշխում է։ Եթե գերիշխող արժեքի կողքին երկրորդ արժեքը ծավալային սահմանափակ գործածութիւն ունի, ապա բառիմաստի նեղացման գործոնով պայմանավորված՝ կարող է դուրս գալ բառույթի իմաստարժեքային դաշտից։ Ընդ որում, վերջինս կա՛մ բառի նախնական իմաստն է, որ զիջել է նոր արժեքին, կա՛մ էլ ձեռք բերված նոր իմաստը, որը, որպես նորամուտ տարր, դեռ չի կայունացել։

Քննենք նմուշներ այդ կարգի բառերից։

|            |            |           |            |           |
|------------|------------|-----------|------------|-----------|
| անապատ     | անգոյ      | խօսուն    | աշխարհակալ | ծաղկաներկ |
| բարբարոս   | անցաւոր    | կրօնաւոր  | արծաթագործ | ծառատունկ |
| թարգման    | բանաւոր    | հետեակ    | ակնածու    | մարտակից  |
| ոամիկ      | բռնաւոր    | մխիթարիչ  | եկամուտ    | ջրաբեր    |
| քրիստոնեայ | էական      | միայնաւոր | ինքնակալ   | քաջալիք   |
| անհատ      | խորհրդական | օտարական  | լծակից     | և այլն։   |

Բարբարոս—«Օտարներին՝ հույների տված անվանում. այլազգի, վայրենի, խաժամուժ» իմաստներով համատեղում է ածականի և գոյականի արժեքները։ Հմմտ. Բազում զոհութիւն Աստուծոյ մատուցանեմք յաղագս քո բարեհամբաւութեանդ ի մէջ այդպիսի Բարբարոս ազգի (Խոր)–ած.։ Բարբարոսին շնորհեցին ոչ սակաւ մարդասիրութիւն մեզ (ՀՔԿ)–գոյ.։

Իսկ «բարբարոսական, բարբարոսներին հատուկ» իմաստով հանդես է դալիս ածականի անխառն իմաստով ու արժեքով։ Հմմտ. Քննեալ զբարբարոս զբանս աղուաներէն լեզուին՝ առնէր ապա նշանագիրս (Կոր.)։

Բռնաւոր—«այր բռնակալ, թագավոր, իշխան. գոռոզ, բռնակալությամբ տիրող՝ իշխող» իմաստներով համատեղում է գոյականի և ածականի խոսքիմասային արժեքները։ Հմմտ. Ի Յորայ փորձանացն է ուսանել, թե չէ սատանայ բռնաւոր (Եզն.)–ած.։ Երբեր նմա իշխանութիւն ի վերայ բռնաւորաց նորա (ՀՔԿ)–գոյ.։

Իսկ «բռնուն, անտանելի» իմաստով անկախացել է ածականի խոսքիմասային արժեքով։ Հմմտ. Դառն և բռնաւոր ծառայութեամբ։ Ըստ բռնաւոր կամացդ (Փարպ.)։

Էական—«աստվածային. ինքնագոյակ, գոյութիւն ունեցող բան» իմաստներով խոսքիմասային երկարժեք բառ է։ Հմմտ. Եթէ որպէս վկայուեն, ի՞նչ է պատճառ ամենեցուն, և նոյն էական և մշտնջենաւոր, յայտ է, թէ ս. չուն ոչ էականք են, և ոչ մշտնջենաւոր (Եզն.)–ած.։ Ինքն է ամենայն բնութեանց արարիչ յոշնէ և ոչ էութեան էականաց իրիք խառնիչ (Եզն.)–գոյ.։

Յ Հետազայում, XII գ., ն. Շնորհալին գործածում է «եկեղեցական կարգում՝ վիճակավոր, ժառանգավոր, կղեր» գոյականական իմաստներով. Լինել քահանայս և ժառանգս Էկեղեցւոյ (Շնորհ.)։

Արմատի իմաստի աստիճանական մթագնման հետևանքով բառը, ձեռք բերելով «գոյացական, իսկական, ներքին և բուն» իմաստներ, անկախացել է միայն ածականի իմաստով ու արժեքով: Հմմտ. Զեական ծնունդն բանին ի հօրէ՛ յառաջ քան գյաւտեանս քարոզեաց (ՆՀԲ):

Իմաստասէր—«իմաստութիւն սիրող. փիլիսոփա» իմաստներով ածական է և գոյական: Հմմտ. Առն իմաստասիրի ուրախ առնի հայր իւր (ՀԲԿ)—ած.: Յարահետեողք իմաստասիրացն և վերահայեցողք չափաբերապէս մակագրութեանց՝ դաստեղիս ի լուսնոյ ասեն ընծուիլ (Խոր.)—գոյ.:

Խսկ—«առաքինի, զգաստ, իմաստուն, հեզ» իմաստներով անկախացել է ածականի արժեքով: Հմմտ. Յածութեան և զգաստութեան բանս բարբառել է արանց իմաստասիրաց և կատարելոց (Աս.): Իմաստասիրին պարտ և արժան է աղատամիտ լինել ի նախանձուէ (Սրգ. յկ. Ը):

Ինչպես տեսնում ենք, քննված բառույթները, հին հայերենի մակարդակում ենթարկվելով խոսքի մասային մասնակի տեղաշարժերի, տրոհված արժեքներից անցել են ածականի՝ կորցնելով տարարժեքութեան քերականական կարգը:

11. Տրոհված դաշտերի անկախացում՝ համաեւնական հարաբերությամբ:

Խոսքի մասային տարարժեքությունը ներբառութային լեզվական իրողություն է, որ, սակայն, կարող է դուրս գալ միևնույն բառույթի շրջանակներից, եթե երկփեղկված եզրերն անկախաձայն խոսքի մասային ուրույն իմաստով ու արժեքով: Երկփեղկված արժեքների անկախացումը պայմանավորված է բառի մաստի մասնավորման գործոնով: Երկարժեք բառերը յուրաքանչյուր արժեքում բառաքերականական իմաստի տարբերություն են դրսևորում. բառի մաստի մասնավորումը կարող է միմյանցից այնքան հեռացնել տարբերակված իմաստները, որ յուրաքանչյուր իմաստի համար առանձնաձև բառական մեկ միավոր: Եթե բառական այդ միավորների համապատասխան իմաստներն ու արժեքները միմյանց նկատմամբ ցուցաբերում են համանունական հարաբերություն, ապա այդ զուգբերը դիտվում են իբրև բառական համանուններ. փաստորեն բառույթի տրոհված իմաստները քերականական բազմիմաստությունից կարող են անցնել համանունության:

Այսպես՝ կալանաւոր «բռնված, հանցավոր» հատկանշային իմաստների հետ համատեղում է նաև գոյականի խոսքի մասային արժեք՝ «գերի, բանտարկյալ, կալանավոր» առարկայական նշանակություններով: Հմմտ. Կալանաւորքն արքունի կապեալք կային (ՀԲԿ)—գոյ. և ած.: Ունկն դնէին նոցա կալանաւորքն (ՀԲԿ)—գոյ. և ած.:

Հետագայում, բառի մաստի մասնավորման հետևանքով, տրոհված արժեքներն անկախացել են համապատասխան բառի մաստներով ու խոսքի մասային արժեքներով: Հմմտ. 1. «կալանավորող. դահիճ». Հասին կալանաւորք, և առին զնա, տարան եդին ի բերդն (Լաստ.)—գոյ.: 2. «կալանավորողներին՝ տաժանակիրներին հատուկ». Կալանաւոր կապանօք շարշարէր զիշխանս (ՅՃ. կթ.-ած.):

Այս միավորները համապատասխան իմաստներով ու արժեքներով արդեն բառական համանուններ են:

Քերական—«քերականական արվեստի գիտակ. քերթոց» ածականական իմաստների հետ համատեղում է նաև գոյականի խոսքի մասային արժեք՝ «դպիր» նշանակությամբ: Հմմտ. Կատառելում քերականի և երսփշտականի ոչ ինչ պէտք են պատուիրանի յարուեցատ (Փիլ. Եզր.)—ած.: Ոչ ամենայն մարդ քերական (Սահմ.)—գոյ.:

Լեզվի դարգադման ընթացքում, բառի մաստի մասնավորման ուղիով, բառիս ճյուղավորված եղբեր. անկախացել են ուրույն բառի մաստի հետ: Եւ խոսքի մասային արժեքներով: Ինչպես՝ 1. «բերականական. ռեթորիկան, բանաստեղծական, ճառարար». Քերթողի քերական արուեւորին յարուեւորդէր զգիրս.... քանչի զքերական կանոնն հաստատաբար մեկնէր (ՆՀԲ)—ած.:

2. Այս իմաստիս են ճյուղավորվել Երեւան. քանգակազորն ածականական իմաստները,

2. «քերականություն»։ Գրեցից սակս քերականի, թէ զինչ է անուն սորա (ն. տ.)—գոյ.։

Բառիմաստի մասնավորման հետևանքով հին հայերենում առաջացել են հետևյալ բառական համանունները. արժանի՝ «արժանի, պատշաճ» (ած.)—արժանե՝ «արժանավորություն, արժանիք» (գոյ.), բնակի՝ «բնակավայր, բնակարան, հարկ» (գոյ.)—բնակ՝ «բուն, բնիկ, հարազատ. մնայուն» (ած.), երկրագործ՝ «մշակ, երկրագործ՝ հողագործ մարդ» (գոյ.)—երկրագործ՝ «երկրագործական, հողագործական» (ած.), ժամանակագիր՝ «ժամանակագրական» (ած.)—ժամանակագիր՝ «ժամանակագրություն, ժամանակների պատմության մաշյան» (գոյ.), ծիրանի՝ «ծիրանի ներկ տվող խեցեմորթ. ծիրանագույն ընտիր զգեստ» (գոյ.)—ծիրանի՝ «ծիրանագույն, ծիրանական, կարմրերանգ» (ած.), սառնեցազիր՝ «ստվերով՝ նմանություն մը գծագրված» (ած.)—սառնեցազիր՝ «պատկեր, ստվեր, նմանություն» (գոյ.) և այլն։

Փաստորեն, քննվող այս բառերի ճյուղավորված և անկախացած գոյականական իմաստներն ու արժեքները համանունական հակադրություն են կազմում տվյալ բառերի ածականական իմաստների ու արժեքների հետ։

Ամփոփենք։

1. Հին հայերենի գոյավիճակում գոյական||ածական խոսքիմասային արժեքներ համատեղող որոշ բառեր, բառիմաստի նեղացման կամ մասնավորման գործոններով պայմանավորված, երկարժեքությունից անցել են միարժեքության՝ գոյականի կամ ածականի։

2. Այդ կարգի բառերը, կորցնելով տարարժեքության քերականական կարգը, լեզվի միևնույն գոյավիճակի շրջանակներում բնութագրվում են երկարժեք-միարժեք հարաբերությամբ՝ պայմանավորված արժեքների մասնակի տեղաշարժերով։

3. Խոսքիմասային երկարժեք բառերը, բառիմաստի մասնավորման գործոնով պայմանավորված, լեզվի տարժամանակյա կտրվածքում կարող են առանձնանալ ուրույն բառիմաստով ու խոսքիմասային արժեքով։

4. Եթե երկարժեք բառերի անկախացած իմաստներն ու խոսքիմասային արժեքները կազմում են համանունական հակադրություն, ապա այդ զույգերը դիտվում են իբրև բառական համանուններ։

#### ՀԱՄԱՐԱՐՐԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աս.—Համարարառ Ստ. Ասողիկի «Պատմություն տիեզերական» երկի, Երևան, 1987։

Արծր.—Թովմայ Արծրունու Պատմություն (ըստ ՆՀԲ-ի)։

Եղն.—Համարարառ Ե. Կողբացու «Եղծ աղանդոց» երկի, Երևան, 1972։

Լաստ.—Պատմություն Արիստակեսի Լաստիվերտյու (ըստ ՆՀԲ-ի)։

Խոր.—Համարարառ Մ. Խորենացու «Պատմություն Հայոց» երկի, Երևան, 1975։

Կոր.—Համարարառ Կորյունի «Վարք Մաշտոցի» երկի, Երևան, 1972։

Կրպ. ոտ.—Կարապետ Վարդապետի ոտանալու... (ըստ ՆՀԲ-ի)։

Յհ.—Պատմություն Յովհաննու կաթողիկոսի (ըստ ՆՀԲ-ի)։

ՆՀԲ.—Նոր բառգիրք հայկազան լեզուի, հ. Ա.-Բ, Վենետիկ, 1836—1837։

Նար.—Գրիգորի Նարեկայ Մատենագրությունը (ըստ ՆՀԲ-ի)։

Շնորհ.—Ն. Շնորհալույ Թուղթ ընդհանրական (ըստ ՆՀԲ-ի)։

ՀԲԿ.—Համարարառ Հին և Նոր կտակարանաց, աշխատասիրություն. Թաղեոս վարդապետի Աստուծատուրան Արապկերցույ, Երուսաղէմ, 1895։

Մահմ.—Գիրք Մահմանաց Դաւթի (ըստ ՆՀԲ-ի)։

Սրգ. յկ.—Մեկնություն եօթնանց Թղթոց Կաթողիկեայց, արարեալ երանելուն Սարգսի շնորհալից Վարդապետի (ըստ ՆՀԲ-ի)։

Փարպ.—Համարարառ Ղ. Փարպեցու «Պատմություն Հայոց...» երկի, Երևան, 1975։

Փիլ. Երբ.—Փիլոնի Երբայեցույ Բանք երեք... (ըստ ՆՀԲ-ի)։

որ հանդիպում են Նարեկացու տաղերից մեկում. Սողոմոն արքայն մեծ՝ քերական պերճիք-յարդարեալ զտաճարն (Նար.)։

# МОРФОЛОГИЧЕСКИЕ ПЕРЕХОДЫ ОТ ДВУХВАЛЕНТНОСТИ В ОДНОВАЛЕНТНОСТЬ В ДРЕВНЕАРМЯНСКОМ ЯЗЫКЕ (на базе существительных и прилагательных)

Л. М. ХАЧАТРЯН

Резюме

Изменения в ходе развития языка, происходящие в плане содержания, могут оказать влияние и на частеречную значимость слов. Слова, имеющие двойную значимость—субстантивную и адъективную—вследствие сужения значения претерпели следующие сдвиги в различных стадиях развития древнеармянского языка:

1) Двухвалентность > одновалентность, с потерей морфологической полисемии.

Вследствие сужения значения слова морфологически двухвалентные слова могут стать одновалентными. В этом отношении возможны такие варианты сдвигов: сущ./прил. > сущ. и сущ./прил. > прил.

2) Расчленение двухвалентности, с образованием омонимной оппозиции. Обособление значения слова до того удаляет его дифференцированную двухвалентную значимость, что эти морфологические значения закрепляются за словами, уже признаваемыми как лексические омонимы. В результате этого процесса получается такая схема сдвига:

сущ./прил. → 1. сущ.  
→ 2. прил.